2023, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (637)

Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով

Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում կրթական գործի բոլոր նվիրյալներին, դպրոցական ու համալսարանական մեր զավակներին:

Դարեր շարունակ կրթությունը, գիտության ու մշակույթի զարգացումը առաջնահերթություն են եղել հայոց ազգային-եկեղեցական անդաստանում: Մեր ժողովրդի պատմության դժվարին ժամանակներում անգամ հայոց դպրոցներն ու դրանց անխոնջ մշակները կրթել ու դաստիարակել են ազգի, հայրենիքի ու Եկեղեցու արժանավոր զավակների, ամրապնդել նրանց աստվածասիրությունը, հայրենանվիրումն ու ազգային ինքնագիտակցությունը:

Այսօր մեր պետության ու ազգի առջեւ ծառացած լրջագույն հիմնախնդիրների դիմագրավմանը զուգընթաց առաջնային է հավատավոր, հայրենասեր, բանիմաց ու լուսամիտ սերունդ կերտելու առաքելությունը, քանզի, ինչպես մեծանուն պատմիչն է վկայում, «բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում տգիտությունից»:

Աղոթում ենք, որ Տերը աննվազ եռանդ ու կորով շնորհի կրթության ասպարեզում իրենց ծառայությունը բերող բոլոր նվիրյալներին եւ լուսավորի միտքը աշակերտ եւ ուսանող մեր զավակների՝ նախանձախնդրությամբ գիտելիք ամբարելու եւ այն ծառայեցնելու մեր երկրի առաջընթացին, մեր ժողովրդի բարօր ու լուսավոր ապագայի կերտմանը:

Թող Տիրոջ օրհնությամբ այս նոր ուսումնական տարին բարեզարդվի բարի արգասիքներով՝ ի զորացումն մեր հայրենիքի եւ մեր ժողովրդի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Արցախի հանրապետության օրվա առիթով

Սիրելի՜ բարեպաշտ ժողովուրդ,

Ավելի քան երեք տասնամյակ առաջ Արցախի մեր զավակները համառ պայքարով եւ հավաքական կամքով իրենց անկախությունը հռչակեցին: Պատմական իրենց հողի վրա ազատ, անկախ ու արժանապատիվ կյանք կերտելու տեսիլքով քաջարի արցախցիները համայն հայության զորակցությամբ եւ իրենց տքնաջան աշխատանքով շենացրին հայրենիքը եւ նշանակալի ձեռքբերումներով ամրացրին հիմերը Արցախի նորանկախ Հանրապետության:

Այսօր ծանրացած սրտով եւ խոր մտահոգություններով ենք դիմավորում Արցախի անկախության տոնը: Արցախը վերստին կանգնած է գոյաբանական սպառնալիքների առջեւ: Ադրբեջանը, հայատյացությունը պետական քաղաքականություն դարձրած, շարունակում է անթաքույց իրագործել Արցախը հայաթափելու եւ բռնազավթելու ոճրագործ իր մտադրությունները՝ ցեղասպանական գործողությունների նորանոր դրսեւորումներով: Ավելի քան ինը ամիս ապօրինաբար արգելափակված Բերձորի միջանցքը Ադրբեջանը դարձրել է գործիք իր հանցավոր նպատակների իրագործման համար՝ մեր զավակների նկատմամբ հետեւողականորեն սաստկացնելով բռնաճնշումներն ու ահաբեկումները:

Անելանելի թվացող այս ծանր իրավիճակում չկա այլ ճանապարհ, քան համազգային համախմբումը եւ ջանքերի մեկտեղումը՝ հանուն Արցախի մեր ժողովրդի ինքնորոշման իրավունքի պաշտպանության, հանուն արցախահայության ազատ ու անվտանգ կյանքի: «Ամեն ինչ հանուն Արցախի» նշանաբանով պիտի դիմակայենք ու հաղթահարենք մեզ պատուհասած փորձությունները, քանզի, առաքյալի խոսքի համաձայն, «նեղությունները համբերություն են բերում, համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս: Հույսը երբեք չի ամաչեցնում» (Հռ. Ե 3–5):

Այս հավատքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Արցախի Հանրապետության օրվա առիթով հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք հղում Արցախի քաջարի ժողովրդին, պետական այրերին ու Արցախի թեմի հոգեւոր դասին՝ մաղթելով հավատի ու հույսի ամրություն, տոկունություն ու արիություն՝ Արցախի փրկության պայքարում:

Թող Տիրոջ սերը, օրհնությունն ու խաղաղությունը հովանի լինեն Մեր բարեսեր ժողովրդին եւ համայն աշխարհին:

2 սեպտեմբերի, 2023 թ.

Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում

Օգոստոսի 28–31-ը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ Գերագույն հոգեւոր խորհրդի ժողովը: Ժողովի նիստերը վարեցին Արեւմտյան Եվրոպայի հայրապետական պատվիրակ Տ. Խաժակ արք. Պարսամյանը եւ Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը:

Ադրբեջանական ագրեսիայի եւ աշխարհաքաղաքական բարդ զարգացումների հետեւանքով Հայաստանի ու Արցախի Հանրապետություններում ստեղծված կացության վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանը, ԳՀԽ անդամ ի. գ. դ. Գեւորգ Դանիելյանը եւ «Թաթոյան» հիմնադրամի տնօրեն Արման Թաթոյանը:

Խիստ մտահոգությամբ արձանագրվեց, որ միջազգային լարված իրադրությունից օգտվելով՝ Ադրբեջանի իշխանությունները, որդեգրած պետական քաղաքականության շրջանակներում, ոչ միայն ձգտում են բռնազավթել Արցախը, այլեւ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքները: Այս համատեքստում անդրադարձ կատարվեց Բերձորի միջանցքի արգելափակման արդյունքում Արցախի ամբողջական շրջափակմանը եւ արցախահայության նկատմամբ դրսեւորվող անմարդկային բռնաճնշումներին ու ցեղասպան գործողություններին, ինչի հետեւանքով խաթարվել են երկրի կենսագործունեության բոլոր ոլորտները:

Ներկայացվեցին նաեւ ադրբեջանական իշխանությունների կողմից նախաձեռնված քայլերն ու գործողությունները՝ ուղղված էթնիկ հայկական հետքերի ոչնչացմանն ու յուրացմանը: Զեկույցների շուրջ ծավալված քննարկումների արդյունքում ԳՀԽ-ն հանդես եկավ առանձին հայտարարությամբ:

Մյուռոնօրհնության, եպիսկոպոսաց ձեռնադրության արարողությունների կազմակերպման ընթացքի, ինչպես նաեւ Մայր տաճարի հիմնանորոգության, ներքին հարդարման եւ շրջակայքի բարեկարգման աշխատանքների վերաբերյալ զեկույցներով հանդես եկան Մայր Աթոռի դիվանապետ Տ. Արշակ արք. Խաչատրյանը եւ լուսարարապետ Տ. Մուշեղ եպս. Բաբայանը:

Արձանագրվեց, որ 2023 թ. հոկտեմբերի 1-ին Մյուռոնօրհնեքի արարողությանն իրենց մասնակցությունը կբերեն քույր եկեղեցիների եւ միջեկեղեցական կառույցների ներկայացուցիչներ, Հայ Եկեղեցու նվիրապետական աթոռներից ու աշխարհասփյուռ թեմերից բարձրաստիճան հոգեւոր հայրեր եւ հավատացյալ ուխտավորներ: Մյուռոնօրհնության արարողության շրջանակներում սեպտեմբերի 30-ին Սուրբ Գայանե վանքում տեղի կունենա «Խաղաղության աղոթք»՝ միջեկեղեցական պատվիրակությունների մասնակցությամբ, իսկ հոկտեմբերի 8-ին՝ եպիսկոպոսաց ձեռնադրություն:

Մյուռոնօրհնության տոնական արարողության կազմակերպման աշխատանքների հետ առնչված խոսվեց տաճարի շրջակայքի բարեկարգման ընթացքի մասին: Արձանագրվեց, որ մինչ Մյուռոնօրհնեք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը շինարարների ներդրած ջանքերի արդյունքում պատշաճ բարեզարդությամբ կներկայանա ուխտավոր հայորդիներին:

Ժողովի ընթացքում մտքեր փոխանակվեցին նաեւ Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի կողմից «Կովերի պարտեզ» կալվածքի վարձակալության գործարքի խնդիրների շուրջ: ԳՀԽ-ն կարեւորությամբ ընդգծեց, որ շարունակելու է հետամուտ լինել հարցի բարվոք կարգավորմանը, եւ այդ կապակցությամբ գործադրվելու են հնարավոր բոլոր ջանքերը:

Ժողովի ընթացքում քննարկվեցին նաեւ եկեղեցավարչական, կարգապահական եւ եկեղեցու առաքելության արդյունավորմանն առնչվող այլ հարցեր:

Գերագույն հոգեւոր խորհրդի հայտարարությունը

Գերագույն հոգեւոր խորհուրդը, անդրադառնալով հայրենիքի առջեւ ծառացած գոյաբանական մարտահրավերներին եւ դրանց հետեւանքով Հայաստանի եւ Արցախի Հանրապետություններում ստեղծված կացությանը, արձանագրում է, որ հայրենական կյանքում առկա իրավիճակը ծայրահեղ մտահոգիչ է:

Ադրբեջանական իշխանությունների օգտագործած հռետորաբանությունը, ինչպես նաեւ նախաձեռնած քայլերն ակներեւ են դարձնում, որ վերջինս պաշտոնապես որդեգրել է ոչ միայն Արցախի Հանրապետությունը, այլեւ Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքները բռնազավթելու, էթնիկ հայկական ինքնության հետքերն ու ժառանգությունը ոչնչացնելու քաղաքականություն՝ նպատակ հետապնդելով կազմաքանդել հայոց պետականությունը: Ադրբեջանը ոչ միայն չի դադարեցնում Արցախի շրջափակումը, այլեւ շարունակում է իրականացնել ցեղասպան իր քաղաքականությունը՝ թշնամանքի ու բռնության նորանոր դրսեւորումներով: Ադրբեջանի պետական եւ հանրային ողջ քարոզչամեքենան լծված է հակապատմագիտական թեզերի միջոցով հանրային լայն հարթակներում հայոց պետականության եւ ողջ հայության դեմ կեղծ ու հերյուրածին տեղեկությունների տարածմանը:

Առկա բարդ ու վտանգավոր զարգացումների հանդիման առավել քան մտահոգիչ են Հայաստանի իշխանությունների անհամաչափ արձագանքներն ու վարքագիծը: Մերժելի է հատկապես Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչելու վերաբերյալ Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը, որը չունի բարոյական, իրավական ու անվտանգային որեւէ հիմնավորում եւ բացարձակապես չի համապատասխանում մեր ժողովրդի հավաքական սպասումներին ու ազգային շահերին: Հայաստանի ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունն անսակարկելի են, Արցախի ժողովրդի հանրաքվեով իրացված ինքնորոշման իրավունքը՝ անվիճարկելի:

Գերագույն հոգեւոր խորհուրդը բարձր է գնահատում Արցախյան խնդրի կարգավորման ուղղությամբ միջազգային կառույցների ներդրած ջանքերը: Այսուհանդերձ՝ Արցախի հայության առջեւ ծառացած անմիջական սպառնալիքների համատեքստում միջազգային կառույցների կողմից իրականացվող քայլերն ու նախաձեռնությունները, ցավոք, շարունակում են մնալ անհամարժեք:



Հայրենիքի առջեւ ծառացած գոյաբանական մարտահրավերների հաղթահարման համար ՀՀ իշխանությունները պարտավոր են ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք կհամախմբեն ազգային, քաղաքական եւ հասարակական կառույցների ողջ ներուժն ու կարողությունները Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում: Հայրենիքն ամենքինս է, հայոց պետականությունը՝ սրբազան մասունքը յուրաքանչյուր հայի:

Արցախի Հանրապետության տոնին՝ սեպտեմբերի 2-ին ընդառաջ, Գերագույն հոգեւոր խորհուրդն իր զորակցությունն է բերում Արցախի քաջարի ժողովրդին՝ հայրենի երկրում ազատ, անկախ ու արժանապատիվ կյանքի համար հերոսական իր պայքարում:

Գերագույն հոգեւոր խորհրդի կոչն է մեր ժողովրդին՝ ամենայն սթափությամբ գնահատել երկրում ստեղծված իրավիճակը, թոթափել անտարբերության թմբիրը, հանձնառություն ստանձնել հայրենիքի համար եւ ամենուր մասնակից ու աջակից դառնալ Արցախի անկախության պաշտպանությանն ուղղված ծրագրերին ու միջոցառումներին:

Ամուր վստահություն ունենք, որ Աստծու եւ սերունդների առջեւ ամբողջանվեր պատասխանատվությամբ եւ մեր նախնյաց քաջարի ոգով ու տոկունությամբ կարող պիտի լինենք հաղթահարելու մեզ բաժին ընկած ծանրագույն մարտահրավերները:

Թող Աստված օրհնի երկիրն հայրենի եւ ժողովրդյանն հայոց. ամեն:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ

Օգոստոսի 31-ին՝ 2023–2024 թթ. ուսումնական նոր տարեշրջանին ընդառաջ, Սուրբ Գայանե վանքում, նախագահությամբ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության կարգը:

Արարողությանը ներկա էին կրթական կառույցների եւ ՀՀ ԳԱԱ ներկայացուցիչներ, բուհերի ռեկտորներ, մարզային կրթության վարչությունների ղեկավարներ, հանրակրթական դպրոցների տնօրեններ եւ մանկավարժներ:

Օրհնության կարգի ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրապետական օրհնությունն ու գնահատանքը փոխանցեց կրթության ոլորտի երախտավորներին:

Վերջում, ի պատիվ հրավիրյալների, տեղի ունեցավ ընդունելություն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը

Սիրելի՛ մանկավարժներ,

Կրթադաստիարակչական առաքելության պատասխանատուներ,

Ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները բերում ամենքիդ՝ ուսումնական նոր տարվա մեկնարկի առիթով: Այսօր Սուրբ Էջմիածնում ուխտի վերանորոգության օր է ձեզ համար՝ զորանալու հավատքով եւ նվիրյալ ձեր աշխատանքով սահակ-մեսրոպյան ոգով կրթելու մեր ազգի զավակներին ու նպաստելու հայոց պետականության ամրապնդմանն ու ազգային մեր կյանքի բարգավաճմանը:

Դարերի ընթացքում մտքի եւ հոգու լուսավորությունը մշտապես եղել է եւ է Հայոց Եկեղեցու հոգեփրկչական ու ազգապահպան առաքելության անբաժանելի մասը: Մեր երանաշնորհ հայրերը հոգեմտավոր մեր հարուստ ժառանգությամբ ուսուցանել եւ իմացության ու գիտելիքի լույսն են փոխանցել նոր սերնդին՝ հայորդյաց սրտերում ամրապնդելով սերը եւ նախանձախնդրությունը հայրենիքի եւ մեր սրբազան արժեքների հանդեպ: «Բոլոր չարիքները մարդու միտքն են մտնում տգիտությունից»,– զգուշացնում է Սուրբ Եղիշե վարդապետը Ավարայրի ճակատամարտը նկարագրող իր մատյանում: Այս համոզումով ու գիտակցությամբ են առաջնորդվել կրթության գործին լծված ազգիս նվիրյալ մշակները՝ մերժելով խավարն ու ջատագովելով մտքի լուսավորությունը եւ առաջնային նկատել հոգեւոր-ազգային նկարագրով մարդու ձեւավորումը: Այս առաքելության առաջամարտիկները աստվածասեր ու հայրենասեր Սուրբ Թարգմանիչ վարդապետներն էին, միջնադարյան մեր համալսարանների ու վարդապետարանների բաբունապետներն ու կրթական օջախներում ուսանած լուսամիտ սերունդները:

Արձանագրած նշանակալի ձեռքբերումներով նրանք առաջատար էին ժամանակի գիտության ու կրթության ոլորտներում: Հայոց վարդապետներն անձնուրաց գործունեությամբ ամբողջանվեր ծառայում էին ազգին ու մեր Սուրբ Եկեղեցուն՝ կրթությունը միջոց համարելով աստվածասեր ու հայրենանվեր ոգի ու նկարագիր կերտելու եւ ազգային ինքնությունը պահպանելու համար: Այսօր էլ Հայոց Եկեղեցու կրթադաստիարակչական սրբազան առաքելության տեսլականը նույնն է: Սակայն նկատելի է, որ մեր երկրի կրթական անդաստանում որոշապես տկարացել է ազգային արժեհամակարգով նոր սերունդներին կրթելու անհրաժեշտության գիտակցությունը: Ներդրվող կրթական նոր չափորոշիչներով նվազեցվում է նոր սերնդի ազգային ինքնագիտակցության ու հոգեկերտվածքի կարեւորությունը, ինչը խոցելի է դարձնում մեր զավակներին համաշխարհայնացման գործընթացներում:

Հիրավի, դժվարին ժամանակներ ենք ապրում. դարերի բովում հղկված եւ մեր ազգի կյանքում արմատացած արժեքները մեր օրերում աղավաղվում են, եւ փոխարենը անցողիկ եւ վնասակար գաղափարախոսություններ, երեւույթներ ու դրսեւորումներ են ներմուծվում հասարակական կյանքից ներս՝ ստեղծելով նաեւ հոգեբարոյական ճգնաժամ: Նոր տեխնոլոգիաների սրընթաց զարգացմամբ, ինչպես եւ մարտահրավերներով ու փորձություններով հատկանշվող ժամանակակից աշխարհում կենսականորեն կարեւոր է ազգային ինքնության ձեւավորմանը եւ պահպանմանը միտված մրցունակ կրթության ապահովումը՝ հատկապես կրթական ծրագրում ընդգրկված առարկաների շարքում հայրենագիտական առարկաների պատշաճ դասավանդումն ու մշտամնա արժեքների փոխանցումը մեր զավակներին: Անընդունելի եւ դատապարտելի է, որ կրթական նոր համակարգում կառավարության եւ կրթական ոլորտի պատասխանատուների որոշմամբ այլեւս չի լինելու ժամանակի քննությունը հաղթահարած, աշակերտների եւ նրանց ծնողների կողմից սիրված, ազգային նկարագիրը, ոգին ամրացնող ու արժեհամակարգ սերմանող «Հայոց Եկեղեցու պատմություն» առարկան: Այն նորանկախ մեր պետության կրթական ասպարեզի կարեւոր ձեռքբերումներից էր, որի ավանդման գործում եւս Եկեղեցի–պետություն գործակցությունն արդյունավորվել է հայրենաշահ եւ հոգեշահ տարբեր ձեռնարկներով:

Կրթության սիրելի՛ մշակներ, այսօր ձեզ են վստահված մեր սերունդների կրթությունն ու դաստիարակությունը, նրանց մնայուն արժեքներ փոխանցելը եւ հայկական դիմագիծ ու դրոշմ ունեցող ազգի զավակներ կերտելը: Երբեք չվհատվեք եւ չընկճվեք փորձություններով ու մարտահրավերներով լի այս դժվարին ժամանակաշրջանում: Ձեր գործը քաղցր է, ձեր ճանապարհը թեեւ դժվարին, բայց պատվաբեր, նշանակալի ու երախտարժան: Ձեր աչքի առաջ ունենալով սահակ-մեսրոպյան փաղանգին, երանաշնորհ վարդապետներին ու կրթության բազում նվիրյալների՝ առավել սիրով եւ նախանձախնդրությամբ շարունակեք աստվածահաճո ձեր առաքելությունը՝ ի շահ մեր սիրելի զավակների եւ ի բարօրություն մեր ազգի ու պետության:

Հիշարժան այս օրը կրկին հայրական Մեր գնահատանքն ենք բերում ամենքիդ ձեր գովարժան ծառայության համար՝ մաղթելով աննկուն կամք, նոր իրագործումներ: Թող ձեր ցանած բարի հունդերը առատ պտուղներ եւ արդյունք տան՝ հանուն մեր կյանքի առաջընթացի եւ մեր նոր սերնդի լուսավոր ապագայի:

Աղոթում ենք, որ ամենակարող Աստված անսասան պահի Հայոց աշխարհը եւ լուսավորչահիմն մեր Սուրբ Եկեղեցին եւ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո պահպանի ու շնորհազարդի աշակերտ եւ ուսանող մեր զավակներին, զորակից լինի իմացություն ու գիտելիք մատռվակող կրթության մշակներիդ՝ պարգեւելով մշտանորոգ հաջողություններ:

Բարի, օրհնյալ ուսումնական նոր տարի:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց

Սեպտեմբերի 1-ին **Կաթոլիկ հոգեւորականների**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ճանաչողական այցով Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին ժամանած Կաթոլիկ Եկեղեցու մի խումբ հոգեւորականների՝ գլխավորությամբ Վատիկանի քրիստոնեական միության խրախուսման հանձնախմբի Արեւելյան Եկեղեցիների բաժնի քարտուղար հայր Հիակինթոս Դեստիվելի:

Ողջունելով հյուրերին՝ Նորին Սրբությունն իր օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցեց վերջիններիս:

Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների սերտ փոխհարաբերություններին եւ արդյունավոր համագործակցությանը:

Հանդիպմանը Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց տարածաշրջանում առկա ծանր իրավիճակին՝ մասնավորապես Ադրբեջանի կողմից Հայաստանի ինքնիշխան տարածքների նկատմամբ շարունակվող ոտնձգություններին եւ Արցախի ամբողջական շրջափակմանը, ինչի հետեւանքով արցախահայությունը հայտնվել է հումանիտար աղետի առջեւ: Հայոց Հովվապետը խոսեց նաեւ Արցախի հոգեւոր եւ մշակութային ժառանգության ոչնչացմանն ու յուրացմանն ուղղված ադրբեջանական քաղաքականության մասին:

Ամենայն Հայոց Հայրապետը նաեւ վստահություն հայտնեց, որ հայ ժողովրդի զավակները Աստծու օգնականությամբ, քրիստոնեական զորեղ հավատքի եւ բարեկամ երկրների շնորհիվ կկարողանան հաղթահարել իրենց առջեւ ծառացած բոլոր մարտահրավերներն ու փորձությունները:

Իր հերթին հայր Հիակինթոս Դեստիվելին, շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար, Նորին Սրբությանը տեղեկություններ փոխանցեց կաթոլիկ հոգեւորականների խմբի Հայաստան եւ Մայր Աթոռ կատարած ճանաչողական այցի մանրամասների վերաբերյալ:

Սեպտեմբերի 8-ին **Արցախցի երիտասարդներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց արցախցի շուրջ 35 երիտասարդի՝ ուղեկցությամբ Արցախի թեմի առաջնորդ Տ. Վրթանես եպս. Աբրահամյանի:

Սրբազան հայրը, հայցելով Նորին Սրբության օրհնությունը, տեղեկացրեց, որ երիտասարդները Հայաստանում են իրենց ուսումը շարունակելու Երեւանի բարձրագույն տարբեր ուսումնական հաստատություններում:

Հանդիպմանը երիտասարդ հայորդիները Նորին Սրբությանը ներկայացրեցին իրենց կողմից իրականացվող նախաձեռնությունները, որոնց նպատակն է հայ եւ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել Արցախում ստեղծված հումանիտար աղետին եւ անվտանգային խնդիրներին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, իր հայրական սերն ու օրհնությունը փոխանցելով երիտասարդ արցախցիներին, իր գնահատանքը բերեց նրանց՝ Արցախի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում ներդրվող ջանքերի ու քաջարի ոգու դրսեւորման համար:

Նորին Սրբությունը, մտահոգությամբ անդրադառնալով Արցախում տիրող իրավիճակին, հորդորեց երիտասարդներին անկոտրում կամքով շարունակել իրենց պայքարը հանուն արցախահայության ազատ, անկախ ու անվտանգ կյանքի իրավունքի:

Ամենայն Հայոց Հայրապետը նաեւ վստահություն հայտնեց, որ հայ ժողովրդի զավակները Աստծու օգնականությամբ եւ միջազգային հանրության աջակցությամբ կկարողանան հաղթահարել իրենց առջեւ ծառացած բոլոր մարտահրավերներն ու փորձությունները:

Վերջում Հայոց Հովվապետը պատասխանեց արցախցի երիտասարդների հարցերին, որոնք առնչվում էին արցախյան հիմնախնդրի կարգավորմանը, Արցախի հոգեւոր եւ մշակութային ժառանգության պահպանմանն ուղղված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից տարվող աշխատանքներին:

Սեպտեմբերի 13-ին **Իտալիայի Հանրապետության նախկին վարչապետին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Իտալիայի Հանրապետության նախկին վարչապետ Ռոմանո Պրոդիին:

Հանդիպմանը ներկա էին նաեւ Իտալիայի Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ծովինար Համբարձումյանը, ՀՀ-ում Իտալիայի Հանրապետության արտակարգ եւ լիազոր դեսպան Ալֆոնսո Դի Ռիզոն եւ ԵՊՀ-ի ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, ողջունելով մեծանուն քաղաքական գործչի այցը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, շնորհավորեց վերջինիս ԵՊՀ-ի կողմից պատվավոր դոկտորի կոչմանն արժանանալու առիթով:

Հանդիպմանը Հայոց Հովվապետը նշեց, որ հայ-իտալական բարեկամությունն ունի դարերի պատմություն, եւ ընդգծեց, որ եղբայրական հարաբերությունների խորացման գործում կարեւոր դերակատարություն են ունեցել Հայաստանյայց Առաքելական եւ Հռոմի Կաթոլիկ Եկեղեցիները, որոնց ջերմ գործակցությունը շարունակվում է եւ այսօր:

Ամենայն Հայոց Կաթողիկոսն անդրադարձ կատարեց նաեւ տարածաշրջանում ստեղծված բարդ իրավիճակին, Ադրբեջանի կողմից Հայաստանի սահմանների նկատմամբ շարունակ ոտնձգություններին, ինչպես եւ շրջափակման հետեւանքով Արցախում ստեղծված հումանիտար աղետին: Հայոց Հայրապետը, գնահատելով տարածաշրջանում խաղաղության ու կայունության հաստատման գործում միջազգային հանրության ներդրած ջանքերը, կարեւոր նկատեց առավել ազդու միջոցների գործադրումը՝ կանխելու արցախահայության նկատմամբ բռնաճնշումների եւ Արցախը հայաթափելու Ադրբեջանի քաղաքականությունը:

Իր խոսքում Իտալիայի նախկին վարչապետ Ռոմանո Պրոդին անդրադարձավ տարածաշրջանային ընդհանուր զարգացումներին եւ աշխարհաքաղաքական փոփոխություններին՝ ի մասնավորի կարեւոր նկատելով հակամարտության խաղաղ կարգավորման գործում միջազգային կառույցների առավել ներգրավվածությունը:

ՀՀ-ում Ֆրանսիայի նորանշանակ դեսպանին



Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Ֆրանսիայի Հանրապետության նորանշանակ արտակարգ եւ լիազոր դեսպան Օլիվիե Դըկոտինյիին:

Դեսպանին բարեմաղթելով արդյունավոր առաքելություն՝ Նորին Սրբությունն անդրադարձ կատարեց երկու երկրների միջեւ հաստատված ջերմ հարաբերություններին եւ գործակցությանը: Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ ընդգծեց, որ հայ-ֆրանսիական բարեկամական կապերի խորացման գործում իր ներդրումն ունի նաեւ Ֆրանսիայի հայկական համայնքը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը, անդրադառնալով տարածաշրջանում ստեղծված ծանր կացությանը, իր երախտագիտությունը հայտնեց Ֆրանսիայի իշխանություններին Հայաստանի ու Արցախի առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարման գործում ցուցաբերվող աջակցության եւ զորակցության համար:

Իր հերթին նորանշանակ դեսպանը հաստատեց, որ Ֆրանսիան շարունակելու է տարբեր ոլորտներում բազմակողմանի աջակցություն ցուցաբերել Հայաստանին եւ Հայաստանին եւ ջանքեր գործադրել Արցախին հումանիտար օգնություն եւ անվտանգային երաշխիքներ տրամադրելու ուղղությամբ:

Սեպտեմբերի 14-ին **Հայ կանանց միջազգային միության անդամներին**

Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց Հայ կանանց միջազգային միության անդամներին՝ գլխավորությամբ միության ղեկավար Հրանուշ Հակոբյանի:

Հանդիպմանը տիկին Հակոբյանը, անդրադառնալով հայ ժողովրդի կյանքում Հայ Եկեղեցու կարեւորագույն դերակատարությանը, հայցեց Նորին Սրբության օրհնությունը:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր հայրական օրհնությունը բերեց միության անդամներին՝ կարեւորելով հայ կանանց եւ մայրերի դերն ազգային կյանքում՝ հատկապես հետպատերազմյա այս բարդ ու ծանր շրջանում տիրապետող հուսահատական տրամադրությունների հաղթահարման գործում: Այս առնչությամբ Նորին Սրբությունն ընդգծեց, որ ստեղծված դժվարին իրավիճակը եւ ծառացած հիմնախնդիրները հնարավոր է հաղթահարել համատեղ ջանքերով եւ ազգային միասնականությամբ: ➥ էջ 4

Հայ կանանց միջազգային միության անդամներին

↩ էջ 3

Իր խոսքում Հայոց Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ Հայ կանանց միջազգային միության օգտաշատ ծառայությանը՝ ուղղված հայ ժողովրդի կյանքում ազգային արժեքների զորացմանը:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը նաեւ պատասխանեց միության անդամների հարցերին, որոնք վերաբերում էին Հայ Եկեղեցու ծիսաարարողական կյանքին եւ տարբեր ոլորտներում ծավալած գործունեությանը:

Սեպտեմբերի 15-ին

Բուենոս Այրեսի ՀԲԸՄ-ի «Մարի Մանուկյան» վարժարանի սաներին

Ամենայն Հայոց Կաթողիկոսը հյուրընկալեց Բուենոս Այրեսի (Արգենտինա)՝ Հայկական բարեգործական ընդհանուր միության «Մարի Մանուկյան» վարժարանի ավարտական լարանի սաներին:

Վեհափառ Հայրապետը, իր հայրական օրհնությունը բաշխելով աշակերտներին, ուրախությամբ ընդգծեց, որ գեղեցիկ ավանդույթ է դարձել վարժարանի ավարտական լարանի սաների այցելությունը Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Այս առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսն իր գնահատանքը բերեց ՀԲԸՄ-ի պատասխանատուներին եւ վարժարանի տնօրենությանը նման նախաձեռնության համար:

Նորին Սրբությունը վստահություն հայտնեց, որ Հայաստան այցելությունը կսնի ու կզորացնի հայրենասիրության այն հունդերը, որոնք վարժարանի մանկավարժները սերմանել են սաների սրտերում:

Իր խոսքում Հայոց Հովվապետն անդրադարձավ Հայաստանում ու Արցախում առկա դժվարին կացությանը, Արցախում ստեղծված հումանիտար աղետին՝ ընդգծելով արցախահայության քաջարի եւ աննկուն ոգին, որով դիմագրավում են առկա փորձությունները: Հայոց Հայրապետը կարեւորեց նաեւ Սփյուռքի ազգային կառույցների ջանքերը Արցախին օգնելու եւ հայ ժողովրդի առջեւ ծառացած մարտահրավերները հաղթահարելու ուղղությամբ:

Հանդիպմանն Ամենայն Հայոց Կաթողիկոսը վերհիշեց Արգենտինա կատարած հովվապետական այցելության շրջանակներում իր այցը ազգային կառույցներ եւ կրթական հաստատություններ՝ գնահատելով արգենտինահայ գաղութի կազմակերպվածությունն ու ազգային արժեքների նկատմամբ նախանձախնդրությունը: Այս առնչությամբ Նորին Սրբությունը հորդորեց ուխտավոր հայորդիներին լինել ազգասեր ու եկեղեցանվեր, վառ պահել ազգային գիտակցությունն ու ոգին եւ իրենց նպաստը բերել համայնքային կյանքի զորացմանը:

Վերջում Վեհափառ Հայրապետը պատասխանեց սաների հարցերին, որոնք վերաբերում էին արցախյան հակամարտության կարգավորմանն ի նպաստ Հայ եկեղեցու գործադրած ջանքերին եւ արցախահայության համար իրականացվող մարդասիրական ծրագրերին:

Կատարվեց Հանրապետական մաղթանք Արցախի անկախության տոնի առիթով

Սեպտեմբերի 3-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ Սուրբ Գայանե վանքում, հընթացս պատարագի սրբազան արարողության, կատարվեց Հանրապետական մաղթանք Արցախի անկախության տոնի առիթով: Հոգեւորականաց դասն ու հավատացյալ ժողովուրդը միասնական աղոթք բարձրացրեցին առ բարեգութն Աստված՝ Արցախի պետականության եւ ժողովրդի խաղաղ ու անվտանգ կյանքի համար:

Լրատվական նյութերը՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
տեղեկատվական համակարգի

Սուրբ Խաչ կամ Խաչվերացի տոն

«Նա ներեց մեզ մեր բոլոր հանցանքները եւ ոչնչացրեց հրամաններով հաստատված այն պարտամուրհակը, որ մեր դեմ էր, վերացրեց այն մեջտեղից եւ մեխեց խաչափայտին»
(Կողոս. Բ 14):

Սուրբ Խաչը կամ Խաչվերացը Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու հինգ տաղավար տոներից վերջինն է, իսկ Խաչին նվիրված տոներից՝ ամենանշանակալիցը, որովհետեւ նվիրված է գերությունից Խաչի վերադարձի եւ փառաբանումի հիշատակությանը: Խաչվերացը տոնվում է ի հիշատակ Տիրոջ խաչափայտի՝ պարսկական գերությունից դեպի Երուսաղեմ վերադարձի եւ Գողգոթայում կանգնեցման ու վեր բարձրացման (գրաբար՝ «վերացման»):

Սակայն թե ինչու է Սուրբ Խաչն այսքան երկրպագելի ու պաշտելի մեզ՝ քրիստոնյաներիս համար, լավագույնս պարզ է դառնում Խաչի խորհրդի մասին ճանաչողությունից: Խաչի զորությունը Քրիստոսն է, որ միացած եւ բեւեռված է նրա վրա, նյութը փայտն է, ձեւը՝ քառակողմ, իսկ մահապատժի գործիք լինելը մեզ համար կյանքի պատճառ եղավ: Սուրբ Գրիգոր Տաթեւացին Խաչի մասին ասում է. «Ուր Խաչն է, այնտեղ են Խաչյալը եւ խաչելությունը»: Ճիշտ է՝ Քրիստոսի մահվան պատճառ եղավ ոչ միայն Խաչը, այլեւ մեխերը, որով գամեցին Քրիստոսին, ինչպես նաեւ փշե պսակը, որը եւս վնաս պատճառեց Տիրոջ մարմնին, սակայն մենք հատկապես Խաչին ենք այսպիսի պատիվ ընծայում, որովհետեւ մահվան գործիքներից միայն Խաչն է, որ նմանվում է Խաչյալ Քրիստոսին կամ ձեռքերը տարածյալ Քրիստոսին: Ուրեմն՝ Խաչն իր ձեւով եւ պատկերով մեզ ներկայացնում է Խաչյալ Քրիստոսին եւ կամ Իր ձեռքերը մեզ համար տարածած, մեզ Իր սիրող գիրկը կանչող Քրիստոսին: Համաձայն Տաթեւացու՝ «Խաչը առաքյալների քարոզությունն է եւ հայրապետների դավանությունը: Խաչը մարտիրոսների պսակն է եւ նահատակների հաղթանակը: Խաչը թագավորների թագն է եւ իշխանների իշխանությունը: Խաչը անմեղների խրատն է եւ մեղավորների քավիչը: Խաչը Քրիստոսի փառքն է եւ քրիստոնյաների պարծանքը: Խաչը հոգեւոր զենք է եւ չբթացող սուր: Խաչը դժոխքի ավերողն է եւ գերյալներին ազատողը: Խաչը գերեզմանների կնիքն է եւ կյանքի հարությունը: Խաչը դրախտի դռներ բացողն է եւ արքայությունը՝ ժառանգություն տվողը: Խաչը Քրիստոսի կարապետն է եւ հարության հրավերը: Խաչը անհավատների կուրությունն է ու հավատացյալների զորությունը: Խաչը մոլորվածների ճանապարհն է եւ խավարյալների ճառագայթը...»:

Սուրբ Դավիթ Անհաղթն ասում է, որ Խաչը Քրիստոսի ձեւն ունի, Քրիստոս ամեն պահ նրա վրա է եւ երբեք չի զատվում նրանից: ➥ էջ 5

Սուրբ Խաչ կամ Խաչվերացի տոն

↩ էջ 4

Իսկ Սուրբ Գրիգոր Նարեկացին իր «Մատյան ողբերգության» պոեմում բացականչում է.«Եւ Խաչ՛վդ էր, որ անարատ հանդերձ հագցրիր Հարսիդ՝ ի սեր Փեսայի՛դ: Փոքր այս խթանով երկու կես արիր վիթխարությունը ապերասանի, եւ ստամբակին ընդդիմանալու կրթության համար՝ ստվար լո՛ւծը այս կարգադրեցիր եւ չարախոսի վայրաբա՛ն, վանո՛ղ կզակի վրա Խաչդ դարձրիր զսպո՛ղ մի կապանք» (Բան ՂԲ):

Աստվածաբանական առումով քառաթեւ Խաչի չորս թեւերը մեկնաբանվում են հետեւյալ կերպ: Խաչի վերին մասը ցույց է տալիս երկնային արքայությունը, ստորինը՝ դժոխքի ավերումը, աջը՝ շնորհների բաշխումը, իսկ ձախը՝ մեղքերի թողությունը: Այս ամենից բացի՝ քառաթեւ Խաչը խորհրդանշում է նաեւ չորս առաքինությունները, որոնց վրա պետք է տարածենք մեր ներքին մարդուն. վերին մասը նշանակն է սիրո, ստորինը՝ խոնարհության, աջը՝ հնազանդության, իսկ ձախը՝ համբերության:

Սուրբ Խաչի այս խորհուրդն է, որ իր հովանու ներքո է համախմբում քրիստոնյաներին: Այդ խորհուրդը փայփայելով էր, որ Խաչափայտի գյուտից հետո Հեղինե թագուհին սուրբ Կոստանդիանոս կայսեր հրամանով Գողգոթայի վրա կառուցեց Սուրբ Հարության տաճարը եւ այնտեղ կանգնեցրեց Տիրոջ խաչափայտը: Այդ ժամանակվանից սկսած, Հակոբոս Տյառնեղբոր օրինակով, քահանայապետը բարձրացնում էր Տիրոջ խաչափայտը՝ հավատացյալների պահպանության համար:

Իսկ ահա երբ իր հզորության գագաթնակետին հասած Պարսկաստանի Խոսրով Ամբարիշտ թագավորը 610 թվականին կամենում էր իրեն հպատակեցնել Հերակլ կայսերը, մեծ զորք է ուղարկում Հերակլի դեմ: Պարսիկները ներխուժում են Սուրբ Հարության տաճար, բռնագրավում Սուրբ Խաչը եւ տաճարի ոսկյա ու արծաթյա սպասքը, իսկ քաղաքն այրում: Պարսից Խոսրով թագավորը խաչափայտը մեծ պատվով պահեց իր գանձարանում եւ Խաչի առջեւ մի անշեջ կանթեղ էր մշտապես պահում:

Քրիստոնյաները, զրկվելով իրենց սրբությունից, հայտնվեցին այնպիսի անմխիթար կացության մեջ, ինչպիսին ժամանակին հրեաների վիճակն էր, երբ փղշտացիները գերեվարել էին Աստծու Ուխտի տապանակը: Այնուհետեւ Հերակլ կայսրը, Տիրոջ նախանձախնդրությամբ լցված, աղոթքով ու ծոմապահությամբ դիմեց Աստծու օգնությանը: Արքան քուրձ հագավ, հանեց իր թագն ու թագավորական ծիրանին եւ մոխրի վրա ընկնելով՝ երեք օր շարունակ աղոթեց՝ բարեխոս ունենալով Մարիամ Աստվածածնին: Չորրորդ օրը նա ստացավ աղոթքի պտուղը. տեսիլքով նրան հայտնվեց, որ պետք է հաղթի այդ պատերազմում: Եվ իսկապես, ճակատամարտում Հերակլը հաղթեց, Խոսրովը սպանվեց, իսկ նրա բանակի մնացորդը փախուստի դիմեց: Սկզբում Սուրբ Խաչը Պարսկաստանից հանդիսավոր թափորով փոխադրվում է հայոց Կարին քաղաքը, ապա այնտեղից՝ Կոստանդնուպոլիս, իսկ հետո՝ Երուսաղեմ: Խաչափայտն աննկարագրելիորեն մխիթարում ու ոգեւորում է բարեպաշտ հավատացյալներին: Գերեդարձության ճանապարհին Խաչը գրեթե ամեն տեղ բարձրացվում է եւ ամենուր ցնծություն առաջացնում, ինչը կարծես Քրիստոսի հարության վերապրումն էր: Այս իրադարձություններն էլ պատճառ դարձան Խաչվերացի տոնի հաստատման համար:

Այդ առիթով է Կարնո դաշտի հարավարեւելյան կողմում բարձրացող լեռների մեծ գագաթը Խաչափայտ կոչվում: Այդ լեռան սարահարթի վրա բխում է սառնորակ ջրի աղբյուր, որն ուխտատեղի է դարձել: Տեղական ավանդությունը պատմում է, որ Խաչը հանձնելուց հետո պարսիկները կրկին փորձում են այն հետ վերցնել: Հայերը, խաչափայտն այնտեղ թողնելով, հետ են մղում պարսկական կողմի հարձակումը եւ երբ վերադառնում են խաչափայտը վերցնելու, տեսնում են, որ Խաչի դրված տեղից վճիտ աղբյուր է բխում: Նույնանուն լեռների ստորոտում կա Խաչկա վանքը, ուր Խաչվերացի սքանչելի տոնի առիթով ժամանակին բազում ուխտավորներ էին այցելում:

Ամփոփելով՝ հիշատակենք Սուրբ Հովհան Ոսկեբերանի խոսքերը, որոնք լավագույնս բնութագրում են քրիստոնյաներիս համար Խաչի ունեցած զորությունն ու նշանակությունը. «Խաչը մեր փրկության նշանն է, Խաչը քրիստոնյաների հույսն է, Խաչը եկեղեցու հիմքն է, Խաչը սատանայի պարտությունն է, Խաչը որբերի հայրն է, Խաչը ամբարիշտների դատավորն է, Խաչը հիվանդների բժիշկն է, Խաչը օրվա զենքն ու գիշերվա պահպանիչն է, Խաչը ծարավողների աղբյուրն է, Խաչը լույսն է խավարում նստածների եւ ազատագրումը գերվածների, Խաչը անօրենի տապալումն է»:

ԱՆՆԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ

Գեւորգ սրկ. Կարապետյան

Խաչի Քո Սերը

Քո ջինջ արցունքն իմ խղճին անձրեւիր,
Խղճին իմ տոչոր, ցամաք, անապատ,
Ու թող որ խիղճն իմ սեր պտղաբերի՝
Խաչի Քո սերը՝ եւ խեղճ, եւ հպարտ:

Սերը Քո Խաչի, որ խեղճության մեջ
Կանգնած է հպարտ՝ հայացքը՝ երկինք՝
Հավիտենություն....
Արցունք սերմանիր իմ սրտում Դու խեղճ,
Որ Խաչն իմ ծաղկի մինչեւ Քո սուրբ գիրկ՝
Մինչ սուրբ Հարություն....:

Աստվածաշունչը՝ դաստիարակության անկյունաքար

Սկիզբը՝ թիվ 16

Չափազանց բարձր էր գնահատում Սուրբ Գիրքը նաեւ «ժամանակակից մանկավարժության հայրը»՝ Պեստալոցին (1746—1827): Իր հաստատության 1807 թ. ուսումնական տարվան նվիրված զեկույցներից մեկում նա հետեւյալ խոսքերով է արտահայտվում Աստվածաշնչի դաստիարակչական նշանակության մասին. *«Բոլոր բարձր դասարանների սաները շաբաթական երկու անգամ էին կրոն ուսանում: Իբրեւ ձեռնարկ ծառայում էին Մովսեսի սրբազան գրքերը, որոնցում շարադրված էր մարդկության կրոնական զարգացման ընթացքը եւ նրանց վրա խարսխված Հիսուս Քրիստոսի սուրբ վարդապետությունը (այնպես, ինչպես Իր իսկ կողմից ներկայացված է Ավետարանում): Պարտականությունների մասին վարդապետության հիմքում մենք դրել ենք Հիսուսի Լեռան քարոզը, իսկ հավատքի վարդապետության հիմքում՝ առավելապես Հովհաննեսի Ավետարանը: Այս ամենն ընթերցվում էր մեկը մյուսի հետ փոխադարձ կապակցության մեջ. Քրիստոսի հավիտենական ճշմարտություններն Աստծո, Իր, իբրեւ մարմնացյալ Աստծո, առ Աստված մարդկության հարաբերության, Աստծո հետ կյանքի մասին, այս ամենը, հասկանալի է, որ յուրացվում էին: Մենք ձգտում ենք Քրիստոսի օրինակով, Նրա՝ իրերը, մարդկանց, նրանց հարաբերությունները հայելու եղանակով, երեխաների մեջ ակնառու կերպով կենդանացնել կրոնի աներկբա էության վրա հիմնված հավատքի, հույսի եւ սիրո զգացմունքները, դրանք սովորություն դարձնել եւ զարգացնելով վսեմացնել նրանց միտքն ու գործերն այն աստիճան, որ նրանց մեջ ի հայտ գա ինքը Աստվածությունը»:*

Ըստ ռուս ականավոր մանկավարժ Կ. Դ. Ուշինսկու (1824—1870)՝ միայն ավետարանում է բացահայտված մարդու կյանքի ճշմարիտ նպատակը. *«Մարդու կյանքի ճշմարիտ նպատակ պետք է ճանաչվի միայն այն, ինչն առավելագույնս համապատասխանում է նրա հոգուն... Մենք ոչ մի տեղ չենք հանդիպում մարդու հոգու եւ նրա բնատուր հատկությունների այնպիսի խորունկ ըմբռնման, ինչպիսին քրիստոնեության մեջ է: Աշխարհի ո՞ր գիրքն է այդքան խոր հոգեբանություն, մարդկանց այդքան խոր ճանաչողություն պարունակում, որքան Ավետարանը»:*

Ուշինսկին համոզված էր, որ Ավետարանն օժտված է հոգեւոր ընկալման զարմանահրաշ մատչելիությամբ ոչ միայն մեծերի, այլեւ փոքրերի համար. *«Ավետարանը ներգործում է տասնամյա երեխայի վրա, այդ բանը ես անձամբ զգացել եմ ինձ եւ երեխաների վրա»:*

Ողջ Ռուսաստանում հռչակ վայելող քրիստոնյա մանկավարժ եւ ժողովրդական կրթության բնագավառի ականավոր գործիչ, բուսաբանության դոկտոր Ս. Ա. Ռաչինսկին (1833—1902) Սաղմոսարանի մասին հետեւյալն է գրում. *«Սաղմոսարանը բոլոր դարերի եւ ժողովուրդների քնարերգության գլուխգործոցն է: Նրա բովանդակությունն ամբողջական է ու հավիտենական: Դա Աստծո մեծության ու ողորմածության հարատեւ հայեցողությունն է, սրտի խոյանքը բարոյական վսեմության ու մաքրության հանդեպ, խորին մորմոքը մարդկային կամքի անկատարության համար, անսասան հավատը Աստծո օգնությամբ չարը հաղթելու հնարավորության նկատմամբ: Բոլոր այս թեմաները մշտապես հնչում են միաժամանակ՝ սքանչելիի բազմաբանության զուգորդումներով, անսպառ գեղեցկության, ուժի եւ նրբության դարձվածքներով...»:*

Հռչակավոր մանկավարժ եւ գրող Վ. Պ. Օստրոգորսկին (1840—1902) պատանիների ընթերցանության համար նախատեսված գրքերի շարքում ամենից առաջնային տեղը հատկացնում է Ավետարանին: *«Իմ ընթերցած բոլոր գրքերի մեջ,—* գրում է նա,*— ես ամենավերեւում կզետեղեի Ավետարանը, որը մեզանում, անկեղծ ասած, հազվադեպ են ինքնուրույն ընթերցում հոժարությամբ եւ էլ ավելի քիչ՝ խոհրդածում նրա շուրջ: Ավետարանը միայն հեզության, սիրո եւ մարդասիրության մասին իր վարդապետության անձեռնմխելի անաղարտությամբ արդեն իսկ կարող է ընկալունակ հոգում ճիշտ վերաբերմունք հաստատել առ Աստված»:*

Աստվածաշնչի հսկայական դաստիարակչական դերի մասին խոստովանում է նաեւ մեր օրերում մանկավարժի եւ փորձառական հոգեբանության առաջնակարգ գիտակի համբավ վայելող Ստենլի Հոլլը՝ Մասաչուսեթս նահանգի Ուորչեստերի համալսարանի նախագահը:

«Աստվածաշունչը,— գրում է ամերիկացի գիտնականը,*— պետք է ընդունել ոչ միայն որպես մարդու հոգեբանության մեծ ձեռնարկ, այլեւ գրադարան, որի արժանիքներն արդարացնում են նրա վսեմ անունը: Այն զարմանալիորեն հարմարեցված է մարդու բոլոր տարիքներին. Հին Կտակարանի առաջին մասերը երեխաների համար են, մարգարեություններն ու Նոր Կտակարանը իր սիրո մեծ ավետումով՝ պատանեկության համար: Սուրբ Գրքից անտեղյակների բանակի օրավուր համալրումը պարզապես ապշեցուցիչ է, մանավանդ եթե նկատի ունենանք այն փաստը, որ նրա եւ գրական ձեւը, եւ բովանդակությունը ավելի, քան որեւէ այլ բան, համապատասխանում են պատանեկության խառնվածքին ու պահանջներին»:*

Նյութը պատրաստեց
ԳՐԻԳՈՐ ԴԱՐԲԻՆՅԱՆԸ



Քարինտակ

2015 թ. Շուշիի շրջանի Քարինտակ գյուղի հարավ-արեւմուտքում գտնվող քարայրում, որի մակերեսային շերտերը 50–60 հազար տարվա վաղեմություն ունեն, հայտնաբերված գտածոն ո՛չ նախամարդու գործիք էր, ո՛չ էլ սեպագիր արձանագրություն: Դա մի ատամ էր, որը պատկանել է էնեոլիթի ժամանակաշրջանում ապրած մարդուն: Ատամը 6,5 հազար տարեկան է, սակայն գտածոյի իրական առաքելությունն ավելի լուրջ է, քանի որ նման նմուշները սովորաբար տալիս են հնէաբանական ու հնագիտական արժեքավոր տեղեկություններ, սակայն այս ատամը պետք է պատասխան տար մի շատ կարեւոր հարցի. ո՞վ է եղել այն մարդը, որը 6500 տարի առաջ ապրել է այժմյան Արցախի տարածքում: Ատամի մեջ ԴՆԹ-ն կարող է պահպանվել դարերով: Ուստի հայտնաբերված ատամի ԴՆԹ կառուցվածքը պարզելու համար գտածոն ուղարկվում է Կոպենհագենի գենետիկայի համալսարան, որտեղ էլ գիտնականների կատարած բազում ուսումնասիրությունները պարզում են, որ ատամի ԴՆԹ գենը հենց այն նույն գենն է, որն ունի ժամանակակից հայ մարդը: Այս փաստը վերստին ապացուցում է, որ հայերն այս տարածաշրջանի բնիկներն են՝ Հայկական լեռնաշխարհի հնաբնակները:

Կարկառ գետի Քարինտակ վտակի ձախ ափին՝ անդնդախոր կիրճի զառիթափ քարաժայռի ստորոտում է գտնվում Շուշիի շրջանի չքնաղ Քարինտակ գյուղը: Արեւելքից Կապասարը, արեւմուտքից Կարմրաքարը եւ Տիզկանց ժայռերը, իսկ հյուսիսից Շուշիի ժայռապարիսպը, որին տեղացիները Քերծ են անվանում, օղակել են գյուղը: Շուշիից 5 կմ, իսկ Ստեփանակերտից 18 կմ հեռավորության վրա է գտնվում Քարինտակը, ծովի մակերեւույթից 1300–1400 մ բարձրության վրա:

Քարինտակ գյուղը 1700-ական թվականների առաջին քառորդում հիմնադրել են Խծաբերդ եւ Հին Թաղեր գյուղերից տեղահանված գերդաստանները: Խծաբերդից տեղափոխվածներն իրենց հետ Քարինտակ են «բերել» նաեւ Խծաբերդի բարբառը: Ըստ հին ավանդության՝ Խծաբերդ գյուղն ուներ 600–700 ծուխ: Խծաբերդի բնակիչները քաջ ու անվախ արցախցիներ էին, որ զենքի ուժով պաշտպանում էին իրենց հայրենի գյուղը: Նրանք հրաժարվում են ալեանալու ցեղի քուրդ ցեղապետին հարկ վճարելուց, որը բազմիցս հարձակվում էր գյուղի վրա, բայց ամեն անգամ անկոտրում գյուղացիները միավորվում ու հետ էին շպրտում հայրենի գյուղը գրավել փորձող արյունարբու քոչվորին: Վերջինս տեսնելով, որ չի կարող զենքի ուժով ծնկի բերել, դիմում է քոչվորների համար սովորական դարձած ստոր միջոցի: Հյուրասիրության պատրվակով հրավիրում է գյուղի երեւելիներին ու թունավորում նրանց: Հետո, օգտվելով պատեհ պահից, հարձակվում է գյուղի վրա եւ զենքի ուժով փորձում հնազանդեցնել խծաբերդցիներին: Սակայն այս անգամ էլ խայտառակ պարտություն է կրում եւ փորձում է դիմել մեկ այլ խարդավանքի: Հոգեւոր տոներից մեկի ժամանակ, երբ գյուղացիները հավաքվել էին եկեղեցում, քուրդ ցեղապետը հարձակվում եւ սրախողխող է անում եկեղեցում ներկա անզեն գյուղացիներին: Սպանդը տեւում է երեք օր: Խծաբերդի կողքով հոսող գետն արյունով է ներկվում, եւ այդ օրվանից այն կոչում են Հարամ (կեղտոտ) անունով: Գյուղն ամայանում է, իսկ բնակիչները տեղահանվում են եւ հաստատվում հիմնականում Շուշիի ժայռի ստորոտում՝ հիմնելով մի նոր բնակավայր՝ Քարինտակ անունով:

Թեեւ փոխում են բնակության վայրը, բայց թաթարական ու քրդական ցեղերի ասպատակություններից զերծ չեն մնում: Քոչվորները նորից շարունակում են Քարինտակում իրենց ավերն ու ավարը: Գյուղի բնակչությունն էլ ամեն անգամ ստիպված էր իր հողն ու կյանքը պաշտպանելու համար զենք վերցնել:

Քարինտակ գյուղի մարտիկներն առանձնակի քաջագործություններով աչքի են ընկել 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմի տարիներին: Շուշիի ու Քարինտակի քաջերը Սաֆար հարյուրապետի գլխավորությամբ անսպասելի հարձակվում ու անընդմեջ լարվածության մեջ էին պահում Աբբաս Միրզայի ջոկատներին:

1905–1906 թթ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ Քարինտակը նույնպես ենթարկվում է թաթարական ավազակախմբերի հարձակումներին: Ամեն անգամ, երբ թուրքերը քրդերի հետ փորձում էին ներխուժել Շուշի, այդ ժամանակ օգնության էին հասնում Քարինտակի ջոկատները, եւ թշնամին, տեսնելով այդ ուժը, փոխում էր հարվածի ուղղությունը:

Մսմնայի ճակատամարտը, որը հայկական ուժերի համախմբվածության եւ ինքնակազմակերպման վառ ու փայլուն օրինակ է, Արցախի ազգային-ազատագրական պայքարի կարեւորագույն ու վճռորոշ հաղթանակներից մեկն է: Պատմաբաններին վկայությամբ՝ Մսմնայի ճակատամարտը նույն նշանակությունն ունի արցախցիների համար, ինչ Սարդարապատի ճակատամարտը՝ համայն հայ ժողովրդի: Ահա այստեղ էլ՝ Մսմնայի ճակատամարտում, առավել աչքի է ընկել քարինտակցիների ջոկատը, երբ շուրջ 120 հայ կամավորականները ջախջախել են 400 հոգուց բաղկացած եւ լավ զինված թուրքական բանակը՝ դրանով կասեցնելով թուրքերի մուտքը Արցախ:

1988 թ. իրավիճակը Լեռնային Ղարաբաղում լարված էր: Բերդաքաղաք Շուշին լիովին հայաթափվել էր: Խորհրդային բանակի զինվորականները, անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով, ադրբեջանական ՕՄՕՆ-ի ուղեկցությամբ մտնում էին Քարինտակ, խուզարկում տներն ու կողոպտում գյուղացիներին: Պայթեցնում եւ դեպի գյուղն էին գլորում հսկայական ժայռաբեկորները, որոնք ավերում էին տներն ու ահաբեկում գյուղացիներին: Պայթուցիկ նյութերով լցված հսկայական անվադողերը գլորում էին գյուղի վրա: Այնուհետեւ սկսվում են տղամարդկանց ձերբակալությունները: Քարինտակի ինքնապաշտպանությունը հետագայում փայլուն հաղթանակ է պարգեւում Շուշիում:

Քարինտակի ինքնապաշտպանությունը տեղի է ունեցել 1992 թ. հունվարի 26-ին: Ադրբեջանական զորամիավորումը ղեկավարում էր անձամբ Ադրբեջանի պաշտպանության նախարար Մեհտիեւը: Քարինտակցիներին օգնության են հասնում Դուշման Վարդանի եւ Ա. Ղուլյանի ջոկատները, Ավետարանոց, Շոշ, Սղնախ եւ մոտակա բնակավայրերի ինքնապաշտպանական ուժերը, որոնց ջանքերով հակառակորդը հետ է շպրտվում՝ թողնելով 100-ից ավելի սպանված ու վիրավոր: Քարինտակի խայտառակ պարտությունից հետո Ադրբեջանի հետխորհրդային առաջին նախագահ Մութալիբովը պաշտոնանկ է անում Մեհտիեւին եւ կարգադրում բանտարկել՝ դավաճանության մեղադրանքով:

Քարինտակ գյուղի ինքնապաշտպանությունն Արցախյան ազատամարտի փայլուն էջերից է, որն ապացուցեց, որ իր ազատության համար ընդվզող ժողովուրդն իր պապերից ժառանգած հողից մի թիզ անգամ զիջելու մտադրություն չունի: Հերոսապատում, որ ապրելու է առհավետ՝ որպես հիշեցում ճշմարիտ հայկական ոգու, տոկունության, արիության եւ հայրենի հողին նվիրվածության:

Քարինտակ գյուղում շատ են պատմամշակութային հուշարձանները՝ 1862 թ. կառուցված Սուրբ Աստվածածին եկեղեցին, հին շինատեղերը, ԺԸ դարի գերեզմանոցը, ԺԸ դ. աղբյուրը, ԺԹ ջրաղացները, ԺԳ դարի խաչքարերը: Գյուղը շրջապատված է մի քանի քարայրներով, որոնք հնում ունեցել են անառիկ բերդի եւ պաշտպանական նշանակություն: Քարինտակը բազմիցս հիշատակվում է որպես նշանավոր գրչության կենտրոն:

Քարինտակ գյուղի վերին թաղամասում է գտնվում 1841 թ. կառուցված (ըստ արձանագրության) Սուրբ Աստվածածին եկեղեցին: 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո համացանցում հայտնվեց մի տեսանյութ, որտեղ հստակ երեւում է, որ ադրբեջանցի զինվորականները ներսուդուրս են անում Սուրբ Աստվածածին եկեղեցում, բարձրանում խորանի վրա, անարգում ու պղծում են այն: Տեսանյութում երեւում է նաեւ, որ եկեղեցու խորանը կիսված է: Ադրբեջանական զինված ուժերը առանձնակի վայրագություններ են ցուցաբերում Արցախյան ազատամարտին նվիրված հուշարձանների նկատմամբ, եւ բացառություն չէր նաեւ Քարինտակի՝ 1991–1994 թթ. Արցախյան ազատամարտին նվիրված հուշարձանը, որը նրանք պղծել են: Քանի որ Քարինտակ գյուղով է անցնում Ադրբեջանից Շուշի տանող ճանապարհը, գյուղը ներկայումս ավերակ է:

Համաձայն զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին 1954 թ. Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի եւ հաշվեհարդարի ցանկացած գործողություն: Ըստ Հաագայի 1954 թ. առաջին արձանագրության՝ արգելված է գրավյալ տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգեւոր արժեքները: Հաագայի 1999 թ. երկրորդ արձանագրությունը վերահաստատում է այս պահանջը եւ այսպիսի արարքը՝ ըստ 15-րդ հոդվածի, որակում որպես միջազգային հանցագործություն: Մշակութային արժեքների ոչնչացման գործողություններն արգելվում են նաեւ Ժնեւի 1949 թ. օգոստոսի 12-ի՝ պատերազմից տուժածների պաշտպանության, պատերազմի օրենքների եւ սովորույթների վերաբերյալ միջազգային 4 կոնվենցիաների եւ արձանագրությունների, ինչպես նաեւ ՄԱԿ-ի համապատասխան բանաձեւերի եւ մարդու իրավունքների պաշտպանության պայմանագրերի դրույթներով:

Հասմիկ ՄԱԴՈՅԱՆ

Յակոբ Պատրիարք Նալեան

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

Սկիզբը՝ թիւ 9–16

Հաւատքի աստիճաններուն մեկնութիւնը

Տասնմէկերորդ հարցում. *խոհեմութեան մասին, որ բարոյական առաջին առաքինութիւնն է:*

Խոհեմութիւնն առաքինութիւն է, որով չարն ու բարին իրարմէ կը զանազանենք, լաւն ու վատը կ՚ընտրենք, ժամանակը բարեպէս կ՚օգտագործենք՝ անցեալին մասին մտածելով, ներկան իմանալով ու ապագայէն զգուշանալով: Մենք այս խոհեմութիւնը մեղուներէն կը սորվինք, որոնք թէեւ բազմաթիւ ծաղիկներու վրայ կը նստին, սակայն միայն պիտանին կը հաւաքեն ու մեղրը շինեն: Այսպէս ալ մարդը պէտք է խօսքերէն ընտրէ լաւն ու վատը, որովհետեւ ինչպէս ուտելիքին լաւը կ՚ընտրենք, այդպէս ալ խօսքերուն լաւը պէտք է ընտրենք:

Դարձեալ՝ մրջիւնն ալ մեզի խոհեմութիւն կը սորվեցնէ, որ միջատ մըն է. ամռան ձմեռուան կերակուրը կը հաւաքէ որպէսզի սովամահ չըլլայ, իսկ եթէ հաւաքածը խոնաւնայ, արեւին կը հանէ, կը չորցնէ ու դարձեալ ներս կը տանի. եւ որպէսզի ցորենը յանկարծ չբուսնի, մէջտեղէն երկու կտոր կ՚ընէ. տակաւին, խոհեմութեամբ անձրեւը դիտելով՝ անմիջապէս դէպի իր բոյն կը վազէ ու ներս կը մտնէ:

Օձն ալ մեզի խոհեմութիւն կը սորվեցնէ, որ տարին մէկ անգամ իր շապիկը կը մերկանայ՝ յօրինակ խոստովանութեան. եթէ թշնամիի պատահի, ամբողջ անձով դէմ կու տայ վիրաւորելու ու զարնելու, միաժամանակ կը ջանայ գլուխը պահել, քանի որ գիտէ՝ եթէ գլուխը ջախջախուի, ինք կը մեռնի: Այսպէս պէտք է ընէ նաեւ քրիստոնեայ մարդը. ամէն բան պէտք է տայ պատահած ժամուն, եւ հաւատքը, որ բոլոր բարիքներուն գլուխն է, չտայ ու չուրանայ:

Խոհեմութեան գործ են ուրիշները չխաբելն ու ուրիշներէն չխաբուիլը. այդ պատճառով Քրիստոս ըսաւ, թէ՝ *օձերու նման խորագէտ եղէք, եւ միամիտ՝ աղաւնիներու նման*, որպէսզի ուրիշները չխաբէք:

Խոհեմութիւնն ըմբռնողութիւն է՝ մարդուն յատուկ բարութիւն:

Ով որ խոհեմ ըլլայ, կատարեալ իմաստուն է: ➥ *էջ 8*

ԴՄԻՏՐԻ ԼԻԽԱՉՈՎ

ՆԱՄԱԿՆԵՐ ԲԱՐՈՒ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ 2022, թիվ 19 – 2023, թիվ 10, 15–16

Նամակ երեսունիններորդ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԲՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊՈՒՇԿԻՆԸ

Կլոդ Լորրե՞ն: Իսկ ի՞նչ գործ ունեն այստեղ, կհարցնեք, ռուսական բնավորությունն ու ռուսական բնությունը:

Մի քիչ համբերեք, եւ բոլոր թելերը վերստին կմիանան:

Մեզանում պարզունակ պատկերացում ունեն այգի-պուրակային արվեստի պատմության մասին. կանոնավոր այգի, բնապատկերային այգի. այգու երկրորդ տեսակը կտրուկ փոխարինում է առաջինին մոտավորապես ԺԸ դարի 70-ական թվականներին՝ Ռուսոյի գաղափարներով պայմանավորված, իսկ մինչպետրոսյան Ռուսիայում իբր թե եղել են միայն օգտապաշտական այգիներ. դրանցում աճեցվել են մրգեր, բանջարեղեն ու հատապտուղներ: Ահա եւ ամենը: Այնինչ, իրականում այգի-պուրակային արվեստի պատմությունը շատ ավելի բարդ է:

«*Ասք Ռուսական հողի կործանման մասին*» ԺԳ դարի գրվածքում Ռուսիան հրաշալիորեն զարմացրած ամենանշանավոր գեղեցկությունների թվում հիշատակվում են վանական այգիները: Ռուսաստանում վանական այգիները հիմնականում նույնն էին, ինչ Արեւմուտքում: Դրանք գտնվում էին վանքի պարսպի ներսում եւ ինքնին երկրային դրախտի պատկերն էին, իսկ վանքի պարիսպը՝ դրախտի պարսպի: Դրախտի այգում պետք է լինեին նաեւ դրախտային ծառեր՝ խնձորենիներ կամ խաղողի վազեր (տարբեր ժամանակներում «բարու եւ չարի գիտության դրախտային ծառի» տեսակը տարբեր էր ընկալվում), ամեն բան դրանցում՝ աչքի, լսելիքի (թռչունների դայլայլ, ջրի կարկաչ, արձագանք), հոտառության (ծաղիկների ու անուշահոտ խոտերի բույր) եւ համի (հազվագյուտ պտուղներ) համար պետք է գեղեցիկ լիներ: Դրանցում պետք է ամեն ինչի առատություն եւ մեծ բազմազանություն լիներ՝ աշխարհի հարստությունն ու բազմազանությունը խորհրդանշող: Այգիներն ունեին իրենց իմաստաբանությունը, իրենց նշանակությունը: Վանքերից դուրս կային սրբազան պուրակներ՝ մասամբ պահպանված դեռեւս հեթանոսական ժամանակներից, սակայն ինչ-որ մի սրբապատկերի հայտնությամբ կամ եկեղեցական այլ հրաշքով օրհնված ու «քրիստոնեացված»:

Խիստ սակավ տեղեկություններ ունենք մինչ ԺԷ դարի ռուսական այգիների մասին, սակայն մի բան պարզ է, որ «դրախտային այգիներ» եղել են ոչ միայն վանքերում, այլ նաեւ իշխանների քաղաքամերձ գյուղերում: Քաղաքային շինությունների ողջ նեղվածքով հանդերձ՝ միջնապարսպի ներսում այգիներ ունեցել են նաեւ քաղաքացիները: ԺԷ դարի ռուսական այգիների վերաբերյալ այն բազմաթիվ նյութերը, որոնք պատմաբան Ի. Զաբելինը հրատարակել է ԺԹ դարում, սակայն չի կարողացել արվեստագիտորեն ըմբռնել, հստակորեն վկայում են, որ ԺԷ դարի կեսերից մեզանում՝ Մոսկվայում, այգեգործություն է ներթափանցել հոլանդական բարոկկոյի ոճը:

Մոսկովյան Կրեմլի այգիները տարբեր մակարդակներով բաժանված էին սանդղապատշգամբներով, ինչպես պահանջում էր հոլանդական ճաշակը, առանձնացված էին որմերով, զարդարված տաղավարներով եւ տնակներով: Այգիներում կառուցվում էին արհեստական լճակներ՝ կապարե հսկայական ավազանների մեջ՝ նույնպես տարբեր մակարդակներում: Լճակներում լողում էին զվարճալի նավատորմեր, արկղերում բուծվում էին հազվագյուտ բույսեր (մասնավորապես՝ աստրախանյան խաղող), մետաքսե հսկայական վանդակներում երգում էին սոխակներ եւ լորեր (վերջիններիս երգեցողությունը գնահատվում էր սոխակներին հավասար), աճում՝ անուշաբույր խոտեր եւ ծաղիկներ, մասնավորապես՝ սիրված հոլանդական կակաչները (որոնց կոճղեզների գինը հատկապես բարձրացավ հենց ԺԷ դարի կեսերին), փորձում էին թութակներ պահել եւ այլն:

Մոսկվայի բարոկկոյան այգիները տարբերվում էին վերածննդյաններից իրենց հեգնական բնույթով: Դրանք, ինչպես եւ հոլանդական այգիները, ձգտում էին կահավորել գեղատեսիլ նկարներով՝ պատրանքային հեռապատկերներով (ֆր.՝ trompe-l'œil), առանձնացման վայրերով եւ այլն:

Այս ամենը հետագայում Պետրոսն սկսեց կառուցել նաեւ Պետերբուրգում: Միայն թե պետրոսյան այգիներում ավելացան արձանները, որոնցից Մոսկվայում վախենում էին «գաղափարական» նկատառումներով. դրանք ընկալում էին որպես կուռքեր: Ավելացան նաեւ առանձնարանները՝ տարբեր տեսակների եւ զանազան նպատակների համար:

Ռոկոկոյի միտում ունեցող հենց այդպիսի հեգնական այգիներ սկսեցին կառուցվել Ցարսկոյե Սելոյում: Եկատերինյան ապարանքի պարտեզային ճակատի դիմաց գցվեց Հոլանդական այգին, եւ իր այդ անունը՝ Հոլանդական, պահպանում էր դեռեւս Ի դարասկզբին: Դա ոչ միայն այգու անվանումն էր, այլեւ նրա տեսակի սահմանումը: Այն առանձնանալու եւ բազմազանության այգի էր՝ հոլանդական բարոկկոյի այգի, իսկ հետո նաեւ ռոկոկոյի՝ ուրախ կատակի եւ առանձնանալու, բայց ոչ փիլիսոփայական, այլ սիրային, միտումով: Շուտով Հոլանդական այգին՝ ռոկոկոյի այգին, շրջապատվեց ընդարձակ նախառոմանտիզմյան պուրակով, որտեղ «այգու գաղափարախոսությունը» կրկին լրջություն ձեռք բերեց, որտեղ զգալի բաժինն արդեն պատկանում էր հիշողություններին՝ հերոսական, պատմական եւ զուտ անձնական, որտեղ իր գոյության իրավունքն ստացավ զգայունությունը (sensibility of gardens), եւ վերականգնվեց այգիներից վտարված բարոկկոն կամ դրանցում ծաղրանմանակված լուրջ խորհրդածելը:

Եթե ռուսական այգի-պուրակային արվեստի ոլորտի խիստ հակիրճ դիտարկումից դառնանք Պուշկինի լիցեյական քնարերգությանը, ապա դրանում կգտնենք ռոկոկոյի եւ նախառոմանտիզմի շրջանի այգիների ողջ իմաստաբանությունը: Պուշկինն իր լիցեյական բանաստեղծություններում զարգացնում է իր «հեգնական վանականության» («*–Օ՜, Նատալիա, / Ես ճգնավոր եմ, իմացիր...*», թարգմ.՝ Վ. Դավթյանի), պարտեզային մեկուսիության թեման՝ սիրային եւ ընկերների հետ: Պուշկինի համար լիցեյը մի տեսակ վանք էր, իսկ իր սենյակը՝ խուց: Դա փոքր-ինչ լուրջ էր, եւ փոքր-ինչ հեգնական երանգ ուներ: Ինքը՝ Պուշկինը, իր լիցեյական բանաստեղծություններում հանդես է գալիս որպես վանական կանոնների խախտող (խնջույքներ եւ սիրային զվարճանքներ): Այս թեմաները հարգանքի տուրք են ռոկոկոյին: Սակայն տուրք է տրվում նաեւ նախառոմանտիզմի այգիներին՝ նրա հռչակավոր «*Հիշողություններ Ցարսկոյե Սելոյում*» բանաստեղծությունը, որտեղ «հիշողությունները» ռուսական հաղթանակների հուշարձաններն են, եւ որտեղ հանդիպում են օսսիանական մոտիվներ (ժայռեր, մամուռներ, «ճերմակահեր ալիքներ», որոնք իրականում Ցարսկոյեի Մեծ լճում չեն էլ եղել):

Պուշկինը ռուսական բնությունը հայտնագործեց Միխայլովսկոյեում: Միխայլովսկոյեն եւ Տրիգորսկոյեն այն վայրերն են, որտեղ Պուշկինը բացահայտել է ռուսական պարզ բնապատկերը: Ահա թե ինչու Միխայլովսկոյեն ու Տրիգորսկոյեն սուրբ են յուրաքանչյուր ռուս մարդու համար:

Պուշկինսկիե Գոռի ավանի բնությունը ծառայում է որպես Պուշկինի բազմաթիվ բանաստեղծությունների, «*Եվգենի Օնեգին*»-ի առանձին գլուխների մեկնաբանություն, սրբագործված է Պուշկինի՝ այստեղ ունեցած իր ընկերների, ծանոթների, իր Արինա Ռոդիոնովնայի, գյուղացիների հետ հանդիպումներով: Այստեղ ամեն անկյունում Պուշկինի մասին հիշողություններն են ապրում: Պուշկինը եւ այս վայրերի բնությունը բարեկամական միասնությամբ այստեղ ստեղծել են նոր պոեզիա, նոր վերաբերմունք՝ աշխարհի, մարդու նկատմամբ: Պետք է հատուկ ուշադրությամբ պահպանենք Միխայլովսկոյեի ու Տրիգորսկոյեի բնությունը՝ բոլոր ծառերով, անտառներով, լճերով, Սորոտ գետով հանդերձ, քանզի այստեղ, կրկնում եմ, տեղի է ունեցել ռուսական բնության բանաստեղծական հայտնագործումը: Այստեղի յուրաքանչյուր ծառ արժանի է, որ իր ճակատագիրը գիտխորհրդում քննարկման դրվի:

Պուշկինը բնության հանդեպ իր բանաստեղծական վերաբերմունքով՝ ռոկոկո ոճով հոլանդական այգուց եւ նախառոմանտիզմի ոճով Եկատերինյան այգուց անցում է կատարում դեպի Միխայլովսկոյեի եւ Տրիգորսկոյեի զուտ ռուսական բնապատկերը՝ ոչ մի պարտեզապարսպով չրջապատված եւ ռուսական ձեւով բնակահարմարեցված, խնամված, «գուրգորված» պսկովցիների ձեռամբ՝ սկսած իշխանուհի Օլգայի կամ նույնիսկ էլ ավելի վաղ ժամանակներից, այսինքն՝ մի ամբողջ հազար տարի: Եւ պատահական չէ, որ հենց ռուսական «պատմական» բնության այս տիրույթում (իսկ պատմությունը ռուսական բնության հիմնական բաղադրիչն է) ծնվեցին Պուշկինի պատմական ստեղծագործությունները, եւ առաջին հերթին՝ «*Բորիս Գոդունովը*»:

Ցանկանում եմ մի մեծ եւ պատմականորեն ընդարձակ համանմանություն բերել: Պալատի մոտակայքում միշտ եղել են քիչ թե շատ ընդարձակ կանոնավոր այգիներ: Ճարտարապետությունը բնության հետ կապվում էր այգու ճարտարապետական մասի միջոցով: Այդպես էր եւ այն ժամանակներում, երբ ռոմանտիկ բնատեսարանային այգիները նորաձեւ դարձան: Այդպիսին էր Պավելի ժամանակ եւ ԺԹ դարի ազնվական դաստակերտներում, մասնավորապես՝ հռչակավոր մերձմոսկովյաններում: Որքան հեռու պալատից, այնքան ավելի անաղարտ բնություն: Նույնիսկ Վերածննդի դարաշրջանում Իտալիայում վերածննդյան ճարտարապետական այգիների սահմաններից դուրս գոյություն ուներ սեփականատիրոջ կալվածքի բնական մասը՝ նախատեսված զբոսանքների համար. հռոմեական Կամպանիայի բնությունը: Որքան մարդու համար զբոսանքի երթուղիները երկարում էին, որքան ավելի էր հեռանում իր տնից, այնքան նրա համար ավելի էր բացվում հայրենի երկրի բնությունը, այնքան ավելի ազատ եւ մոտիկ էր դառնում տանը՝ նրա այգիների բնական, բնապատկերային մասին: Պուշկինն սկզբում բնությունը բացահայտեց Ցարսկոյե Սելոյի այգիներում՝ պալատի եւ լիցեյի մոտակայքում, բայց հետո դուրս եկավ «խնամված բնության» սահմաններից: Նա լիցեյի կանոնավոր այգուց տեղափոխվեց դրա պուրակային հատվածը, իսկ հետո՝ ռուսական գյուղը: Այդպիսին է Պուշկինի պոեզիայի բնապատկերային երթուղին: Այգուց դեպի պուրակ, իսկ պուրակից՝ ռուսական գյուղական բնություն: Համապատասխանաբար աճում էր նրա՝ բնության եւ ազգային, եւ հասարակական տեսլականը: Նա տեսավ, որ բնությունը ոչ միայն գեղեցիկ է, այլ նաեւ ամենեւին հովվերգական չէ:

«Գյուղը» (1819 թ.) բանաստեղծությունը հստակորեն բաժանված է երկու մասի:

Առաջինում Պուշկինը նկարագրում է Միխայլովսկոյեի ռուսական բնությունը՝ իր լիցեյական բանաստեղծությունների ոգով՝ ընդգծելով հանգիստը, առանձնությունը, «*անհոգ պարապությամբ, որ խոհերին է միշտ ընկեր*», իսկ երկրորդում սարսափում է հասարակական անարդարությունից, որը տիրում է այստեղ՝ «*առանձնության գրկում վսեմագին*».

Բայց ահավոր մի միտք այստեղ տանջում է իմ հոգին.
Ծաղկած այս արտերում ու լեռներում
Տեսնում է իմաստունը տրտմագին
Չորս կողմ մահվան չափ ծանր, ամոթալի տգիտություն:
Չտեսնելով արցունքը, խուլ՝ դեպի հառաչ:
Եւ ընտրված բախտից իբրեւ պատիժ մարդկանց համար՝
Այստեղ աղան է վայրենի, անգութ եւ քրմահաճ,
Փայտի ուժով հափշտակում եւ աշխատանքն արդար,
Եւ սեփականություն, եւ ժամանակը գյուղացու:

(Թարգմ.՝ Ն. Զարյանի)

Պուշկինը, սկսելով Ռուսաստանի բնությունից, աստիճանաբար իր համար բացահայտեց ռուսական իրականությունը:

Չի կարելի որեւէ բան փոխել Միխայլովսկոյեում ու Տրիգորսկոյեում եւ ընդհանրապես նախկին Պսկովի նահանգի պուշկինյան վայրերում (նոր՝ *Պսկովշչինա* բառն ընդհանրապես չի սազում այս վայրերին), ինչպես նաեւ մեր սրտին հարազատ ցանկացած հիշարժան առարկայում: Անգամ թանկարժեք շրջանակն այստեղ հարմար չէ, քանի որ պուշկինյան վայրերը ռուսական բնության այն լայնարձակ հատվածի կենտրոնն են միայն, որն անվանում ենք Ռուսաստան:

Շարունակելի

Ռուսերենից թարգմանությունը՝
Տ. Անդրեաս վրդ. ԵՋԵԿՅԱՆԻ

Հարյուրամյա հոբելյանը՝ 100 բանաստեղծությամբ

Մեր ժամանակների մեծանուն բանաստեղծ Վահագն Դավթյանը հատել է իր երկրային ժամանակի 100-րդ տարեդարձը: 2022 թվականը հոբելյանական էր, լեցուն՝ դավթյանական հոգեպարար եւ զմայլելի շնչով:

Հանրապետության բազմաթիվ բնակավայրերում այդ կապակցությամբ կազմակերպվեցին գրական-երաժշտական բազմաթիվ միջոցառումներ:

Հարյուրամյա հոբելյանի զարդապսակը դարձավ «Համազգային կրթական եւ մշակութային միության» երեւանյան գրասենյակի նախաձեռնությամբ հրատարակված շքեղ հատորյակը, որի էջերում զետեղված են Վ. Դավթյանի լավագույն հարյուր գործերը: Կազմողը ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ, համբավավոր աստուածաբան, դավթյանական բանաստեղծության անդավաճան նվիրյալ Սիլվա Յուզբաշյանն է, խմբագիրը՝ մեր օրերի ճանաչված բանաստեղծ Խաչիկ Մանուկյանը: Իսկ գրքի ուշագրավ ձեւավորման հեղինակը Արտակ Բաղդասարյանն է:

«Ծննդավայր» բանաստեղծությամբ բացվող եւ «Գիշերային զրույց Նարեկացու հետ» պոեմով փակվող գիրքը լավ նվեր է հայ պոեզիայի սիրահարներին եւ բոլոր նրանց, ովքեր ճշմարտացի ընկալում են հայ գրականության եւ առհասարակ հայ մշակույթի էությունն ու բովանդակությունը, ովքեր նվիրված են Հայաստանին եւ հայ գեղարվեստին՝ անմնացորդ եւ անսակարկելիորեն:

Կարող ես տասն անգամ, հարյուր անգամ ընթերցել սույն ժողովածուն եւ վերստին հագուրդ ունենալ այն նորից ու նորեն ընթերցելու համար:

Այո՛, այդպիսին է ճշմարիտ բանաստեղծության խորհուրդը: Վ. Դավթյանի բանաստեղծական աշխարհում Հայաստան երկիրն է՝ իր ամբողջական ընթացքով՝ անցյալով, ներկայով ու գալիքով:

Դավթյանի տողերում ամենից բնորոշ ապրումը, թերեւս, կարոտն է՝ մարդկային հոգին սարսռացնող ու խելագարեցնող կարոտը, որն առկա է նրա յուրաքանչյուր քերթվածում.

Թե հրաշքով ճամփաս տանի
Դեպի Եփրատ ու մանկություն,
Հոտոտելով քեզ կգտնեմ,
Հայրենական փոքրիկ իմ տուն:
Այն կապույտից ու այն ոսկուց,
Որ ջրերին էին թառում,
Կճանաչեմ ու կգտնեմ
Իմ մանկության ոսկե առուն:

Այո՛, Արեւմտյան Հայաստանի Արաբկիր սքանչելի գյուղաքաղաքում ծնված հայորդին գիտակցական ողջ կյանքում խենթացավ կորուսյալ հայրենիքի կարոտից եւ ապրեց զուգահեռ աշխարհում, ապրեց իր անկորնչելի հայրենի եզերքի հետ, ապրեց աներեւույթ, աննյութական, սակայն շատ գիտակցորեն, շատ իրական, հոգու եւ սրտի այրող թելադրանքով.

Երբ վերջին անգամ աչքերս փակվեն այս աշխարհի դեմ,
Ու ճակատիս թրթռա շունչը ուրիշ մի հովվի,
Իմ կոպերի տակ մի վերջին անգամ կփռվի, գիտեմ,
Մի արեւավոր, հեռավոր հովիտ:

Կխշշա խաղաղ ոսկե մի գետակ, բարդի մի զով,
Կթախծի լռին կտուրն արեւոտ տանն իմ հայկական,
Հեռու մի հովիտ, ուր կարոտներիս արահետներով
Քայլեցի անվերջ, չհասա սակայն...

Վահագն Դավթյանը բանաստեղծական չափ ու կշռով, հանգով ու տողով երկնեց իր էրգիրը:

Աստվածային օրհնությամբ լեցուն բանաստեղծի հատընտիրը մեր բանաստեղծության ու մեր ժողովրդի համակ կերպարի եւ հոգեւոր ազնվության վկայագիրն է աշխարհի առջեւ...

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու

Յակոբ Պատրիարք Նալեան

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՈՒՍԱՆԵԼԻ

↩ էջ 6

Տասներկրորդ հարցում. *քաջութեան մասին, որ բարոյական երկրորդ առաքինութիւն է:*

Քաջութիւնն առաքինութիւն ու զօրութիւն մըն է, որով մէկը բոլոր դժուարութիւնները սիրով կը տանի, որ ո՛չ յաջողութիւններու մէջ կը հպարտանայ, ո՛չ ալ ձախորդութիւններու մէջ կը տրտմի ու կը թուլնայ:

Քաջութիւնը հինգ բանի մէջ կը կայանայ.

Առաջին, որ մարդ յոյսով ու քաջութեամբ բարձրագոյն առաքինութիւններուն կը ձեռնարկէ ու չի՛ յուսահատիր գործի մեծութեան պատճառով. Քրիստոս այսպէս ըսաւ առաքեալներուն՝ զանոնք մահուան դէմ զինելով. *մի՛ վախնաք անոնցմէ, որոնք մարմինը կը սպաննեն:*

Երկրորդ, որ մարդ կը խոտորի ու կը շեղի երկրաւորներէն, ինչպէս Մովսէսը ուրացաւ փարաւոնի աղջկան զաւակ ըլլալ:

Երրորդ՝ որ մարդ նեղութիւնները համբերութեամբ ու սիրով կը տանի, քանի որ սէրը մահուան պէս զօրաւոր է:

Չորրորդ, որ մարդ ամէն տեսակի փորձութեան եւ դժուարութեան դէմ կը կենայ վահանի պէս, որովհետեւ ո՛չ ոք պսակ կը ստանայ, եթէ կարգով ու օրէնքով չպատերազմի:

Հինգերորդ, որ մարդ յաղթէ ու նուաճէ ամէն մոլութիւնները, քանի որ մարդուն կեանքն աշխարհին վրայ պատերազմ մըն է:

Քաջ ու բարի մարդ եղի՛ր դուն, ինչպէս կորիւնը առիւծին,

Դժուարութիւններէն մի՛ փախչիր ու քունէն մի՛ յաղթուիր:

Տասներեքերորդ հարցում. *ողջախոհութեան մասին, որ բարոյական երրորդ առաքինութիւն է:*

Ողջախոհութիւնը բոլոր անկարգ ցանկութիւններուն սանձ է, որով մարդ ինքզինք կը զսպէ աշխարհի սէրէն ու վաւաշոտութենէն: Թէեւ Աստուած ցանկական զօրութիւնը կապած է մարդուն մէջ, որով անասուններէն կը տարբերի, սակայն անկարգ ու չար ցանկութիւնը խափանած է զայն. իսկ ցանկութիւնն անհրաժեշտ ու պատուական համարել միայն որդեծնութեան ու պարտքերու հատուցման պարագային: Բայց այս երկուքն ալ խափանուած են կոյսերէն, վարդապետներէն, կրօնաւորներէն ու ճշմարիտ այրերէն: Դարձեալ՝ ողջախոհութիւն է նաեւ, որ մարդ ետքէն ափսոսալու գործ չգործէ եւ առաքինի ճամբէն չելլէ, այլ նուաճէ ցանկութիւնը բանակութեան լուծին տակ: Քանի որ բոլոր մեղքերուն մէջ բղջախոհութեան հեշտութիւնը շուտով կ՚անցնի, սակայն խղճմտանքի որդը շատ կը տանջէ վաւաշոտ ցանկութիւն գործողը, որ առաջ ինչքան ցանկալին կը սիրէր, սակայն ցանկութիւնը կատարելէ ետք կը սկսի աւելիով ատել: Ինչպէս յայտնի է Դաւիթի որդիէն՝ Ամոնէն, որ նախքան ցանկութիւն կատարելը Թամարին շա՛տ կը սիրէր, սակայն չարութիւնը գործելէն ետք այնքան շատ ատեց:



Անպայմանօրէն մարդ երբ իմանայ, թէ իր գործած չարիքը յայտնուած է, տեսնդուն անոր յուզումը, իրար անցնիլը, երբ ցանկութիւնն անցաւ եւ անկրթութիւնը տիրեց անոր: Այդ պատճառով, որպէսզի չխայտառակուի եւ որպէսզի Աստուծոյ աչքէն չելլէ, ողջախոհ Սուրբ Յովսէփ Գեղեցիկը բանտի դժուարութիւններուն համբերեց, տոկաց: Իսկ Սուրբ Շուշանը չընդառաջեց չար ծեր դատաւորներուն՝ հակառակ անոր, որ գիտէր՝ եթէ չընդառաջէ, զրպարտութիւն պիտի ընեն ու զինք սպաննել պիտի տան, սակայն ճիշդ նկատեց մեռնիլ, բայց սուրբ անունը չաղտոտել ու խայտառակ չըլլալ ու Աստուծոյ աչքէն չելլել:

Ողջախոհութիւնը երեք մասեր ունի՝ զգաստութիւն, ժուժկալութիւն եւ համեստութիւն:

Զգաստութիւն՝ ուտելիքներու եւ խմելիքներու, քանի որ շատ ուտելն ու խմելը ցանկութիւնը կը բորբոքեն:

Երկրորդ՝ ժուժկալութիւն, որ մարդ իր ծննդական արմատներուն պիտի չհետեւի:

Երրորդ՝ համեստութիւն, եւ ասիկա բերանին համար է, որպէսզի գէշ խօսքեր չխօսի, քանի որ գէշ բերանը գէշ հոգի կը նշանակէ: Տակաւին, ինչպէս որ գէշ խօսք խօսիլը վատ է, այդպէս ալ լսելը, որ մարդուն սիրտը կը բորբոքէ: Նմանապէս՝ աչքով կեղտոտ բաներու նայիլը մարդուն սիրտը կը հալէ, այդ պատճառով Յոբ Երանելին ուխտ դրաւ իր աչքերուն, որպէսզի կոյս աղջկայ չնայի: Այսպէս ալ հոտոտելիքը պէտք է զսպել, որովհետեւ մուշկը, յամպարն ու այլ անուշահոտ իւղերը բղջախոհին սիրտը կը գրգռեն, եւ շնացող մարդիկն անպայմանօրէն այս չար իւղերուն կը հետեւին:

Եթէ կ՚ուզես ազատիլ, զգայութիւններուդ պահապան դիր,

Եթէ չես ուզեր ափսոսալ, ցանկութիւններու մի՛ հետեւիր:

Տասնչորրորդ հարցում. *արդարութեան մասին, որ բարոյական չորրորդ առաքինութիւն է:*

Արդարութիւնը հաւասարաբաշխ առաքինութիւնն է, որ բոլորին ըստ արժանւոյն կը հատուցէ, որուն՝ պատիւ, որուն՝ երկիւղ, որուն՝ խնամք: Սակայն արդարութիւնը բոլոր առաքինութիւններուն մէջ խառն է:

Արդարութիւն է, որ կը սորվեցնէ, թէ ինչպէս ամէն բանէ վեր պէտք է պատուել ու պաշտել զԱստուած, գթալ ու ողորմիլ ծնողներուն, արիւնակիցներուն եւ բոլոր նեղողներուն, շնորհակալ ըլլալ բարերարէն եւ այդ բարերարութեան համապատասխանը ընել: Վրէժխնդիր ու արդարադատ ըլլալ բոլոր անիրաւութիւններուն եւ զրկանքներուն եւ թոյլ չտալ անհաւատարմութիւն եւ անիրաւութիւն ընել ոեւէ մէկու մը: Ճշմարտախօս ըլլալ ամէն ինչի մէջ. չարին բարի չըսել, բարիին չար չըսել, լոյսին խաւար չըսել, ու խաւարին՝ լոյս:

Տակաւին, դարձեալ արդարութիւն է մեծը պատուելն ու անոր հեղինակութիւնը [յարգելը]. հաւասարին ու նմանին հետ սիրով ապրիլը, եւ իրմէ պզտիկին ողորմիլն ու խնամելը:

Դարձեալ արդարութիւն է, որ մարդ իրեն առնչուած բաներուն միայն խառնուի, իսկ իրեն հետ առնչութիւն չունեցող բանին չմօտենայ, այլապէս այդպիսի մարդը յանդուգն ու ամբարտաւան է՝ օրէնքի ու կանոնի հակառակ, եւ ամօթը չընդունող:

Բոլորին հանդէպ խոնարհ եղիր, մի՛ հպարտանար, եթէ մեծ ես,

Գիտցի՛ր, թէ Աստուած բոլորէն մեծ է, եւ մի՛ ըսեր, թէ փարթամ ես:

Շարունակելի

Փոխադրութիւնը՝
Վարանդ (Յակոբ) ՔՈՐԹՄՈՍԵԱՆԻ

ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն
Գլխավոր խմբագիր՝
Նարինե Հովհաննիսյան
Գրանցման վկայական՝ 624
Խմբագրության հասցեն՝
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հեռախոս՝ (010) 517 280
Էլ. փոստ՝
qristonyahayastan1@gmail.com
qristhay@etchmiadzin.am
web կայք՝
krishayas.wordpress.com
etchmiadzinlibrary.am/en/kristonya-hayastan
Ստոր. տպագր. 1.03.2024 թ.
Տպաքանակը՝ 1265